ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԳԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 8, 1953 Общественные науки

ԼՐԱՏՈՒ

ՄԻ ՔԱՆԻ ՀԱՅ ԵՐԱԺԻՇՏ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ԱՐԽԻՎՆԵՐԸ

Մինչև սովետական կարգերի հաստատումը, ինչպես երաժիշտ ստեղծագործողների, այնպես և երաժիշտ-կատարողների անձնական արխիվների, նրանց արտիստական-հասարակական գործունեությունն արտացոլող փաստաթղթերի հավաքում-կենտրոնացումն իրրև հասարակական հարստություն, մատնված է եղել պատահականության, կամ լավագույն դեպքում այդ աշխատանքը կատարվել է անձնական նախաձեռնությամբ։ Այդ իսկ պատճառով անհետ կորել են աչքի ընկնող երգիչներ՝ Ներսես Շահլամյանի, Արմենակ Շահ-Մուրադյանի, Մարգարիտ Իսրայանի, Ծովակի, Մակար Վարդիկյանի, Մինասյանի, Ղազարովի, Արշակ Կոստանյանի, Վենեցիանովի (Իսեցկի) և այլ երաժիշտների, գիրիժոր Մարգուլյանի, թավջութակահար Տիգրան Ալեքսանյանի, ջութակահար Վրույրի, դաշնակահարներ Եվգինե և Հեղինե Ադամյան քույրերի, Շուշանիկ Իսրայանի և բազմաթիվ այլ արտիստների անձնական արխիվները։

Անցյալում հայ պրոֆեսիոնալ երաժիշտ-կատարողները մեծ մասամբ Հայաստանում մնալու հնարավորություն չեն ունեցել։ Նրանցից շատերը շրջագայել են տարբեր երկրներում։ Նրանք եկել են հայրենիք գերազանցապես գաստրոլներով, իսկ նրանցից մի մասին այդ էլ չի հաջողվել։

Իրերի հաջող բերումով մեր լավագույն երաժիշտ-կատարողներից մի քանիսի անձնական արխիվներն հավաքվել ու պահպանվել են իրենց կամ իրենց մերձավորների ընտանեկան հարկի տակ։

Այդ արխիվներից մի քանիսն է, որ այժմ պահվում է Հայաստանի թանգարանի երաժշտական արխիվում։

Դրանցից մեկը երգչուհի Նադեժդա Գապայանի (1868—1906 թթ.) անձնական արխիվն է, որը պարունակում է կենսագրական հարուստ նյութ, օպերային ներկայացումների, համերգների ծրագրեր, աֆիշաներ, երգչուհու ելույթների մասին հայերեն, ռուսերեն և օտար լեզուներով ռեցենզիաներ (մոտ 200)։ Կա լուսանկարների հարուստ մի բաժին, որը համարյա սպառիչ կերպով երևան է բերում նրա կատարած դերերի ամբողջական և հարուստ պատկերասրահը։ Այստեղ են նաև Ն. Գապայանի կողմից իր մտերիմ ընկերուհուն՝ Նինա Ամիրաջիբիին ուղղված նամակները, որոնք պարունակում են ուշագրավ տեղեկություններ երգչուհու արտիստական կյանքին վերաբերող։

Ն. Գապայանի արխիվում պահպանված նյութերը վկայում են, որ ձայնական արտակարգ հարստությամբ ու գեղեցկությամբ օժտված այդ երգչուհին անջնջելի տպավորություն է թողել իր ժամանակակիցների վրա։ Նրան լսողները հետաքրքիր հիշողություններ են պատմում նրա մասին։ Բոլորովին հակոտնյա (կոնտրաստ) դերեր նա երգել է հավասար հաջողությամբ ու գեղեցկությամբ։

Երգչուհի Ն. Գապայանի մասին մեծ թվով ռեցենզիաներ է գրել նաև կոմպոզիտոր Քրիստափոր Կարա-Մուրզան։ Այդ ռեցենզիաները իր ժամանակին հրատարակվել են պարբերական մամուլում և այժմ ժողովածուի ձևով պահպանվում են արխիվում։ Գապայանի մասին ընդարձակ կենսագրական է գրել Վարդան Սամվելյանը։ Այդ կենսագրականը նույնպես պահպանվում է արխիվում, ձեռագիր վիճակում։

Հաջորդ՝ նույնանման արխիվը երգչուհի Մագդալինա Գենջյանի (1863—1941 թ.) անձնական արխիվի մի մասն է, որի պարունակած նյութերը նույնպես հարուստ տեղեկություններ են տալիս Գենջյանի կենսագրության վերաբերյալ։ Այդ տեղեկություններից պարզվում է, որ Մ. Գենջյանը Ն. Գապայանի հետ միաժամանակ սովորել է Պետերբուրգի Կոնսերվատորիայում և ավարտել է նրա հետ միասին։ Մ. Գենջյանի արխիվում լուսանկարներ քիչ են պահպանվել։ Արժեքավոր նյութերի թվում պետք է հիշել նրա կյանքի

վերջին տարիներին գրված ինքնակենսագրականը, որից պարզվում է, որ նա եղել է հայերեն թարգմանությամբ բեմադրված «Ֆաուստ» օպերայում Մարգարիտայի առաջին դերակատարը։ Օպերան բեմադրվել է 1890 թ. Բաքվում Կարա-Մուրզայի դիրիժորությամբ։ Մ. Գենջյանը մինչև Հայաստան տեղափոխվելը մի քանի անգամ համերգներով այցելել է Անդրկովկասի քաղաքները, այդ թվում Երևան։ Իր շրջագայությունների ընթացքում նա հանդես է եկել Լուկովիչում, Վիլնոյում, Ռեգելում, Պետերբուրգում և այլ քաղաքներում։ Պետերբուրգում տված համերգներում նա կատարել է նաև հայկական երգեր, որոնց ընտրության և ձեռք բերման մեջ նրան օգնել են Մակար Եկմալյանը և Քրիստափոր Կարա-Մուրզան։

Այսպիսով, նա հանդիսանում է հայկական վոկալ երաժշտությունը ռուս հասարակությանը ծանոթացնող առաջին արտիստներից մեկը։

Երգչուհի Մ. Գենջյանը երգել է Վորոնեժի օպերային խմբում Լենինգրադի սիմֆոնիկ նվագախմբի հետ։ Պահպանված է հենց այդ վերջին համերգի ծրագիրը, ուր համատեղ մասնակցությամբ հանդես են եկել երգիչ Շահլամյանն ու պրոֆ. ջութակահար Հովհաննես Նալբանդյանը։

Մ. Գենջյանը երգել է նաև Ռիգայի օպերային խմբի հետ, Ռուսաստանի հարավային այլ և այլ վայրերում։

Գենջյանի անձնական արխիվում պահպանված նյութերը հաստատում են, որ նա մինչև 1920–21 թվականները եղել է վոկալ կատարող, իսկ կյանքի վերջին շրջանում զբաղվել է մանկավարժական աշխատանքով։ Նա դաստիարակել է տասնյակ երգիչ կադրեր, բեմական լավագույն գործիչներ։ Այդ ամբողջ շրջանը զուգադիպում է նրա Հայաստանում ապրելու տարիներին, այսինքն սովետական կարգերի հաստատման առաջին իսկ տարիներից՝ մինչև 1941 թվականը։ Մ. Գենջյանը եղել է Երևանի Կոնսերվատորիայի վոկալ դասարանի հիմնադիրներից մեկը։

Մ. Գենջյանի արխիվում եղած մի շարք ձեռագիր տետրերից երևում է, որ նա իր մանկավարժական աշխատանքին զուգընթաց կատարել է երգարվեստի ավանդման ուսումնասիրական-մեթոդական աշխատանքներ, սակայն հնարավորություն չի ունեցել դրանք ավարտելու։

Նախորդ երկու ֆոնդերի համեմատությամբ ավելի լավ պահպանված է վոկալ կատարող Բեգլար Ամիրջանի (1868–1937 թթ.) անձնական արխիվը։

Բեգլար Ամիրջանն ունի ինքնակենսագրական, որը սկսվում է երաժշտագետ-կոմպոզիտոր Ռոմանոս Մելիքյանին ուղղված մի նամակով։ Այդ նամակից երևում է, որ նա վերջինիս պահանջով է ձեռնամուխ եղել իր ինքնակենսագրականը գրելուն։

Հարուստ են նրա մասնակցությամբ տեղի ունեցած երաժշտական բեմադրությունների (ներկայացումների) կամ օպերաների ու համերգների նյութերը՝ ծրագրեր, աֆիշաներ, լուսանկարներ, նրան ուղղված ուղղերձ-ժապավեններ, ռեցենզիաներ և այլն, որոնք սպառիչ կերպով բացահայտում են նրա բազմաբեղուն երաժշտական-կատարողական, հասարակական գործունեությունը։

Երգիչ Բեգլար Ամիրջանը նույնպես սովորել է Ռուսաստանի կենտրոնում՝ Պետերբուրգում։ Իր ավարտման առաջին իսկ տարիներից նրան հրավիրել են Պետերբուրգի արքունական թատրոնը, որը և դարձել է նրա գործունեության հիմնական կենտրոնը։ Ծրագրերից մեկի վրա գրված է նաև նրա պրոֆեսոր լինելու փաստը, որը մինչև օրս հայտնի չի եղել մեր երաժշտական հասարակությանը։

Բեգլար Ամիրջանը իր հարուստ ձայնական տվյալներով, բարձր կատարողական երգարվեստով, նուրբ, համոզիչ ու անկեղծ խաղով մեծ համբավ է ձեռք բերել ոչ միայն դավառական և անդրկովկասյան քաղաքներում, այլև Ռուսաստանի կենտրոններում։ Նա երգել է նաև Իտալիայի մի շարք քաղաքներում։ Տիկ. Մ. Թումանյանն իր հուշերում գրում է, որ Ամիրջանը ելույթներ է ունեցել 70 քաղաքներում։ Նրա ռեպերտուարում եղել է 50 ուսումնասիրված օպերա, չհաշված առանձին երգային ռեպերտուարը։ Ամիրջանը երգել է հիմնականում իրրև բարիտոն, երբեմն կատարել է նաև բասի պարտիաներ։

1916 թվականին նա տեղափոխվում է Թիֆլիս և դերազանցապես նվիրվում է մանկավարժական աշխատանքի, երբեմն միայն ելույթներ ունենալով։

Ամիրջանն իր աշակերտներին հաղորդում է ռուսական վոկալ դպրոցի լավագույն տրադիցիաները։ Մինչև իր կյանքի վերջին տարին նա ծառայել է հայ և Անդրկովկասի

մյուս ժողովուրդների երաժշտական կադրերի դաստիարակման, ազգային երգարվեստի զարգացման գործին։

Ջութակահար պրոֆ. Հովհաննես Նալբանդյանի (ծնված 1871 թ. Սիմֆերոպոլում, մեռած 1942 թ.), արխիվը—կատարողների արխիվներից ամենալիակատարն է, որն ստացվել է 1947 թվականին, ջութակահարի կնոջից՝ Աննա Ստեփանի Նալբանդյանից, իրբև նվեր։ Նալբանդյանը նույնպես գրել է ընդարձակ ինքնակենսագրական, որի էջերում արձանագրված են նրա կյանքի հիմնական դեպքերը, սկսած մանկական տարիներից, մինչև 1913 թվականը։ Նրա կյանքի հետագա տարիներին վերաբերող հարուստ փաստաթղթեր կան արխիվում։

1894—95 թվականներից Հ. Նալբանդյանն սկսում է իր արտիստական-մանկավարժական գործունեությունը, հիմնականում լինելով Պետերբուրգում։ Կոնսերվատորիան ավարտելուց հետո չհեռանալով այնտեղից, նա մնում է իբրև իր ուսուցիչ պրոֆ. Լեոպոլդ Աուերի օգնականը։ Դեռ իր ուսման տարիներից նա ծանոթ է եղել տեղի հասարակությանը, իբրև աչքի ընկնող ջութակահարներից մեկը։ Ավարտելուց հետո նա պարբերաբար հանդես է գալիս համերգներով, միաժամանակ շրջելով Ռուսաստանի բազմաթիվ քաղաքները։ Նա շրջագայել է նաև Անդրկովկասի քաղաքները՝ Բաքու, Թբիլիսի, Երևան, Ալեքսանդրոպոլ, Կարս։ Նալբանդյանը համերգներ է տվել նաև արտասահմանում։ Ժամանակի պարբերական մամուլում նրա մասին տպագրված ռեցենզիաները և հոդվածները, որոնք խնամքով հավաքված են և պահվում են նրա արխիվում, լիակատար պատկերացում են տալիս նրա կատարողական արվեստի և ռեպերտուարի մասին։ Նրա արխիվը հարուստ է ոչ միայն անձնական բնույթի նյութերով, այլև այնպիսի փաստաթղթերով, որոնք պատկերացում են տալիս նրա մանկավարժական աշխատանքի մասին։

Ջութակահար պրոֆ. Հովհաննես Նալբանդյանի անձնական արխիվում չափազանց ակնառու փաստերով (լուսանկարներ, նամակներ, հոդվածներ, ռեցենզիաներ, ինքնակենսագրական, զեկուցագրեր, հուշեր և այլն), արտացոլվում է ռուսական լուսավորական այն միջավայրը, որի մեջ դաստիարակվել, կրթվել ու կազմակերպվել են հայ մի շարք ուսանողներ։

Անհամեմատ աղքատ է ջութակահար Դավիթ Դավթյանի (ծնված 1877 թ. Տրապիզոնում, մեռած՝ 1911 թ. Մարզվանում) արխիվը։ 1937 թվականին Մ. Թումանյանի միջոցով հաջողվել է կապ ստեղծել Թբիլիսիում աշխատող նրա ընկերներից մեկի հետ, որը իր ժամանակի մամուլում գրել է Դ. Դավթյանի մասին։ Մյուս կողմից, կապվելով ջութակահարի հարազատների հետ, նա վերջիններիս օգնությամբ մասամբ կորուստից փրկել է նրա արխիվի մի փոքր մասը։ Հավաքված նյութերի մեջ են Դավթյանի մի շարք նամակները, որոնք գրված են 1904—1911 թթ. ընթացքում, այսինքն մինչև Մարզվանում նրա տված վերջին համերգը։ Նրա արխիվում պահպանված է Դավթյանի եղբոր մի քանի նամակները ևս։ Ջութակահար Դավիթ Դավթյանի մտերմական նամակները բաց են անում նրա բազմատանջ ներքնաշխարհը, նրա էսթետիկական հակումներն ու ըմբռնումները։ Արխիվում պահվում է ջութակահարի անավարտ կենսագրությունը (հեղինակն անհայտ), մամուլում լույս ընծայված մոտ 50 կտոր հոդվածներ նրա մասին, հայտարարություններ, քննադատականներ, իրեն՝ Դ. Դավթյանի՝ արվեստի խնդիրների մասին գրած մի քանի հոդվածները՝ նույնպես հրապարակված մամուլում, մեկ երկու հատված իր հուշագրերից, ջութակի համար գրված նրա ստեղծագործությունները՝ արտագրված ուրիշի կողմից, մի քանի համերգների ծրագրեր և շատ սակավաթիվ լուսանկարներ, թեև փոքրաթիվ, բայց արժեքավոր այդ նյութերը վառ կերպով բնութագրում են տաղանդավոր ջութակահարի կարճատև կյանքի և արտիստական գործունեության ընդհանուր պատկերը։

Վերջին տարիներին ստացվեց կոմպոզիտոր-դիրիժոր-խմբավար Դուրգեն Ալեմշահի (ծնված 1908 թ., մեռած 1947 թ. Փարիզում) անձնական արխիվը։

Ալեմշահը բարեբախտաբար իր ժամանակին հրատարակության է տվել իր ստեղծագործությունները, ձայնագրել տվել նաև իր դիրիժորությամբ կատարած օրկեստրային գործերը, վերածելով նրանց գրամ պլաստինկաների, որոնք բոլորը պահվում են նրա արխիվում։ Ձայնագրված նյութերի մեջ են Ալ. Սպենդիարյանի օրկեստրային գործերից «Երևանյան էտյուդներ»-ից «Հիջազ»-ը։

1950 թ. ձեռք բերվեց երգահան, խմբավար Նիկոլ Դալանդերյանի (ծնված Ակն քաղաքում 1881 թ., մեռած 1944 թ.), բավականաչափ ծավալուն անձնական արխիվը։ 70

հերթական համարների տակ նրա արխիվում պահվող նյութերը լիակատար կերպով արտացոլում են Գալանդերյանի կյանքի և ստեղծագործական ուղին։ Նրա երաժշտական հեղինակությունները մեծ մասամբ մանկական են. կան և քնարական, գերազանցապես պարուրված թախծի ու կարոտի մոտիվներով։

Վ. ԱՌԻԼԹԱՆՑԱՆ

ԴԻՍԵՐՏԱՑԻԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1953 թ. հունիսի 20-ին Հայկական ՍՍՌ ԳԱ նիստերի դահլիճում տեղի ունեցավ Պատմության ինստիտուտի գիտական խորհրդի նիստը, որտեղ լսվեց Պատմության ինստիտուտի կրտսեր գիտական աշխատակից Դերենիկ Սուրենի Վարդումյանի «Լոռվա գյուղացիության կոլտնտեսային կենցաղը» և Վլադիմիր Նահապետի Ղազախեցյանի «Հայկական ՍՍՌ-ն Մեծ բեկման տարում» (1929) դիսերտացիաների հրապարակային պաշտպանությունը, պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ստանալու համար։

Ընկ. Վարդումյանի դիսերտացիայի պաշտոնական օպոնենտներ՝ դոկտոր-պրոֆեսոր Է. Ադայանը, պատմ. գիտությունների թեկնածուներ՝ Է. Կարապետյանը և Վ. Բդոյանը, ինչպես և ելույթ ունեցող ընկերները նշեցին «Լոռվա գյուղացիության կոլտնտեսային կենցաղը» թեմայով դիսերտացիոն աշխատանքի արժանիքները և միջնորդեցին գիտական խորհրդի առաջ ընկ. Վարդումյանին շնորհելու պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան։

Վ. Ղազախեցյանի դիսերտացիայի պաշտոնական օպոնենտներ՝ դոկտոր-պրոֆեսոր Վ. Ռշտունին, էկոնոմիկական գիտությունների թեկնածու Ս. Խրիմլյանը և պատմական գիտությունների թեկնածու Հ. Կարապետյանը նույնպես նշեցին ընկ. Ղազախեցյանի դիսերտացիոն աշխատանքի արժանիքները և միջնորդեցին՝ դիսերտանտին շնորհելու նրա հայցած գիտական աստիճանը։

Պատմության ինստիտուտի գիտական խորհուրդը Դ. Ս. Վարդումյանին և Վ. Ն. Ղազախեցյանին շնորհեց պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան։

27 (6—53 թ.

* * *

1953 թ. հուլիսի 1-ին և 2-ին Հայկական ՍՍՌ ԳԱ նիստերի դահլիճում տեղի ունեցավ Գրականության և արվեստի ինստիտուտի ու Լեզվի ինստիտուտի միացյալ գիտական խորհրդի դռնբաց նիստը, որտեղ լսվեցին հետևյալ դիսերտացիաների հրապարակային պաշտպանությունները.

1. Սղիշե Ավետիսի Մարտիկյան.— թեման՝ «Նկարիչ Ստեփան Ադաջանյանի ստեղծագործությունը»՝ արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճան ստանալու համար։

2. Արտաշես Բալասանի Կարինյան.— թեման՝ «Հայ պարբերական մամուլի պատմությունից»՝ ֆիլոլոգիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ստանալու համար։

3. Մատթևոս Հովհաննեսի Մուրադյան.— թեման՝ «Քրիստափոր Կարա-Մուրզան և բազմաձայնության ներմուծումը հայ երաժշտության մեջ»՝ արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճան ստանալու համար։

4. Մուշեղ Ղազարոսի Ադայան.— թեման՝ «Հայկական տաղերի երաժշտական արվեստը»՝ արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճան ստանալու համար։

Ս. Մարտիկյանի «Նկարիչ Ստեփան Ադաջանյանի ստեղծագործությունը» դիսերտացիայի համար որպես պաշտոնական օպոնենտներ հանդես եկան պրոֆեսորներ՝ Գ. Գյուրջյանը և Ս. Ստեփանյանը։